Հավելված N 427
ՀՀ էկոնոմիկայի նախարարության
գլխավոր քարտուղարի
2019 թ.հուլիսի 26-ի N 636-Ա հրամանի

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ

1.Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) հանրային ներդրումների վարչության (այսուհետ՝ Վարչություն) հանրային ներդրումների զարգացման բաժնի (այսուհետ՝ Բաժին) պետ (ծածկագիր՝ 23-32.13-Ղ4-2)

1.2. Ենթակա և հաշվետու է

Բաժնի պետն անմիջական ենթակա և հաշվետու է Վարչության պետին:

1.3. Ենթակա և հաշվետու պաշտոններ

Բաժնի պետին անմիջական ենթակա և հաշվետու են Բաժնի աշխատողները:

1.4. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Բաժնի պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի գլխավոր մասնագետներից մեկը:

1.5. Աշխատավայրը

Հայաստան, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Միհեր Մկրտչյան 5

2. Պաշտոնի բնութագիր

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները՝

1) ապահովում է հանրային ներդրումների կառավարման օրենսդրության, այդ թվում՝ հանրային ներդրումային ծրագրերի վերհանման, մշակման, գնահատման և առաջնահերթությունների սահմանման օրենսդրական հիմքերի, հանրային ներդրումային ծրագրերի և հայեցակարգերի նախագծերի (նախա)գնահատման և առաջնահերթությունների սահմանման մեթոդաբանության և ընթացակարգի մշակման աշխատանքները.

2) ապահովում է հանրային ներդրումային ծրագրերի կազմման և ներկայացման նվազագույն պահանջների մշակման և դրանց կիրառման աշխատանքները.

3) ապահովում է հանրային ներդրումային ծրագրերի նախագծերի հավաքագրման և դիտանցման, հանրային ներդրումային ծրագրերի նախագծերի վերաբերյալ մեթոդաբանական աջակցության տրամադրման աշխատանքները.

4) ապահովում է հանրային ներդրումների կառավարման շրջանակներում կարողությունների զարգացմանն ուղղված միջոցառումների, ուսուցման և վերապատրաստման դասընթացների կազմակերպման աշխատանքները.

5) ապահովում է հանրային ներդրումների կառավարման շրջանակներում փաստաթղթերի օրինակելի ձևերի և խորհրդատվական ուղեցույցների մշակման աշխատանքները.

6) ապահովում է հանրային ներդրումային ծրագրերի նախագծերի տեխնիկատնտեսական ուսումնասիրության իրականացման աշխատանքները.

7) ապահովում է հանրային ներդրումային ծրագրերի նախագծերի (նախա)գնահատման իրականացման աշխատանքները.

8)ապահովում է հանրային ներդրումային ծրագրերի արդյունքների՝ հաշվետվությունների վրա հիմնված գնահատման իրականացման աշխատանքները.
9)ապահովում է հանրային ներդրումային ծրագրերի շտեմարանի ստեղծման և վարման աշխատանքները.
10) ապահովում է հանրային ներդրումների կառավարման համակարգի քաղաքականության մշակման աշխատանքները:

Իրավունքները՝

• համապատասխան մարմիններից պահանջել լրացուցիչ տեղեկատվություն և մասնագիտական կարծիքներ հանրային ներդրումների կառավարման օրենսդրության, այդ թվում՝ հանրային ներդրումային ծրագրերի վերհանման, մշակման, գնահատման և առաջնահերթությունների սահմանման օրենսդրական հիմքերի, հանրային ներդրումային ծրագրերի և հայեցակարգերի նախագծերի (նախա)գնահատման և առաջնահերթությունների սահմանման մեթոդաբանության և ընթացակարգի վերաբերյալ.
• հրավիրել մասնագիտական քննարկումներ հանրային ներդրումային ծրագրերի նախագծերի հավաքագրման և դիտանցման, հանրային ներդրումային ծրագրերի նախագծերի վերաբերյալ մեթոդաբանական աջակցության տրամադրման շրջանակում"
• կազմակերպել հանրային ներդրումների կառավարման շրջանակներում կարողությունների զարգացմանն ուղղված միջոցառումներ, ուսուցման և վերապատրաստման դասընթացներ.
• համապատասխան մարմիններից պահանջել հանրային ներդրումային ծրագրերի նախագծերի վերջնական փաթեթները վերջիններից (նախա)գնահատման համար.
• հրավիրել միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակում հանրային ներդրումային ծրագրերի նախագծերի վերաբերյալ աշխատանքային քննարկումներ.
• համապատասխան մարմիններից պահանջել հանրային ներդրումների կառավարման շրջանակներում փաստաթղթերի օրինակելի ձևերի և խորհրդատվական ուղեցույցների մշակման վերաբերյալ կարծիքներ
• հանրային ներդրումային ծրագրերի շտեմարանի ստեղծման և վարման աշխատանքների շրջանակներում հանրային ներդրումային ծրագրերի նախագծերի վերաբերյալ ոլորտային մարմիններից պահանջել համապատասխան տեղեկատվություն.
• կազմակերպել աշխատանքային քննարկումներ հանրային ներդրումային ծրագրերի նախագծերի տեխնիկատնտեսական ուսումնասիրության իրականացման վերաբերյալ
• հրավիրել համապատասխան միջազգային կառույցների ներկայացուցիչների հետ հանդիպումներ և ոլորտին առնչվող հարցերի քննարկումներ:

Պարտականությունները՝

• ստուգել և ամփոփել հանրային ներդրումների կառավարման օրենսդրության, այդ թվում՝ հանրային ներդրումային ծրագրերի վերհանման, մշակման, գնահատման և առաջնահերթությունների սահմանման օրենսդրական հիմքերի, հանրային ներդրումային ծրագրերի և հայեցակարգերի նախագծերի (նախա)գնահատման և առաջնահերթությունների սահմանման մեթոդաբանության և ընթացակարգի վերաբերյալ տեղեկատվությունը.
• ներկայացնել առաջարկություններ հանրային ներդրումային ծրագրերի նախագծերի հավաքագրման և դիտանցման, հանրային ներդրումային ծրագրերի նախագծերի վերաբերյալ մեթոդաբանական աջակցության տրամադրման շրջանակում"
• տալ եզրակացություն հանրային ներդրումների կառավարման շրջանակներում կարողությունների զարգացմանն ուղղված միջոցառումների, ուսուցման և վերապատրաստման դասընթացների կազմակերպման վերաբերյալ.

• ստուգել և ամփոփել հանրային ներդրումային ծրագրերի նախագծերի (նախա)գնահատման արդյունքները.
• ներկայացնել առաջարկություններ միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակում հանրային ներդրումային ծրագրերի նախագծերի վերաբերյալ կազմակերպվող աշխատանքային քննարկումների շրջանակներում.
• ստուգել, գնահատել և տալ եզրակացություն հանրային ներդրումների կառավարման շրջանակներում փաստաթղթերի օրինակելի ձևերի և խորհրդատվական ուղեցույցների մշակման վերաբերյալ.
• ստուգել և գնահատել հանրային ներդրումային ծրագրերի շտեմարանի ստեղծման և վարման աշխատանքները"
• հետևել հանրային ներդրումային ծրագրերի նախագծերի տեխնիկատնտեսական ուսումնասիրության իրականացման աշխատանքներին
• ներկայացնել առաջարկություններ համապատասխան միջազգային կառույցների ներկայացուցիչների հետ հանդիպումներին և ոլորտին առնչվող հարցերի քննարկումներին:
• համապատասխան մարմինների կողմից ներկայացված հանրային ներդրումային ծրագրերի նախագծերի վերաբերյալ տալ մասնագիտական եզրակացություններ:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3. Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երեք տարվա ստաժ կամ չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ տնտեսագիտության բնագավառում՝ չորս տարվա աշխատանքային ստաժ:

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Աշխատակազմի կառավարում
2. Քաղաքականության վերլուծություն, մոնիթորինգ
3. Որոշումների կայացում
4. Ծրագրերի կառավարում
5. Խնդրի լուծում
6. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Բանակցությունների վարում
2. Փոփոխությունների կառավարում
3. Ժամանակի կառավարում
4. Ելույթների նախապատրաստում և կազմակերպում
5. Ժողովների և խորհրդակցությունների կազմակերպում և վարում
6. Փաստաթղթերի նախապատրաստում

4.Կազմակերպական շրջանակ

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման կազմում գործող կառուցվածքային միավորի աշխատանքների կազմակերպման և ղեկավարման համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման կազմում գործող կառուցվածքային միավորի աշխատանքների կազմակերպման և ղեկավարման շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի գերատեսչական մակարդակում աշխատանքների կազմակերպման և իր լիազորությունների իրականացման արդյունքում այլ անձանց վրա ազդեցություն:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի, այլ պետական մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչների, ինչպես նաև օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ իր իրավասությունների շրջանակներում:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է իր կողմից ղեկավարվող կառուցվածքային միավորի գործառույթներից բխող խնդիրները և դրանց տալիս լուծումներ: